

ՏԵՂԵԿԱՏՈՒ

DEGHEGADOU

ديجيجادو

Հասցե: Գրախոսական կենտրոնի ԼՂԸՆԲ

نشرة جمعية القادسية للتحرير والاعتماد العامة



150-ԱՄԵԱԿ
ԳԱՆՈՒՍՏԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
(1854-2004)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

**Հայաստանի Հանրապետության Անկախության
13-րդ Տարեդարձի Նշում Գահիրեի մէջ
եւ Ողջերթ ՀՀ Արտակար - եւ Լիազօր Դեսպան
Տոթթ. Սեր էյ Մանասարեանի**

ԽՍԲԱԳԻՐ
Արաքսի Տեղւթեան

ՀԲԸՄ-ի 83-րդ Ընդհանուր Ժողովը 2

ԳԵՂԱՐՈՒԹԵՍԱԿԱՆ
ՁԵԻՒՌՈՒԹՄ
ՇԱՀԷ ԼՈՒՍԱՐՍԵԱՆ

**Գնահատանք ՀԲԸՄ-ի Ե Իպտոսի
Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ
Տիար Պերճ Թերզեանի** 3

ՀԱՍԱԿԱՐԳՉԱՅԻՆ
ՇԱՐՈՒԿԾՔ
ԱՆԻ ՊՕՂՈՍԵԱՆ

**Տեղեկատուութիւն ՀԲԸՄ-ի Ե Իպտոսի
Շրջանակի եւ ՀԲԸՄ-ի Գահիրեի Մասնաճիւղին
Մասին** 4

**Սաթենիկ Գ. Չա ըր Ֆոնտ «Հայ Ոսուցիչներու
Գնահատանքի Կենսաթոշակ»** 6

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Nubar Printing House

«Հայերէն Լեզուի Ուսուցիչ Կ'ուզուի» 7
Արաքսի Տեղւթեան

**Գերապայծառ Տ. Գրի որ Օ ոստինոս Եպիսկոպոս
Գուսան կ'այցելէ Գահիրեի ՀԲԸՄ-ի Կեդրոնը** 8

**Գալուստեան Ազ -ային Վարժարան
150-ամեակի Յօբելենական Հանդիսութիւն
Անի Պօղոսեան** 9

**Համառօտ Տեղեկութիւններ
Գալուստեան Ազ -ային Վարժարանին Մասին** 13

**Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միաբաններ
Հո շ. Տ. Գաբրիէլ Աբեղայ Սար Իսեան եւ Հո շ. Տ.
Տաճատ Աբեղայ Ծատուրեան Գահիրեի Մէջ** 14

**Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գէոր Եան Հո Եւոր
Գեմարանի Հիմնադրման 130-ամեակը
Հոգեշնորհ Տ. Տաճատ Աբեղայ Ծատուրեան** 15

Տիկինը՝ Որ Գիրքէն Ստեղծեց Հայրենիք մը 17
Տոթթ. Սամիր Սարիան
Թրգմն. Արաքսի Տեղւթեան

**Տոթթ. Գորճ Սիմոնեանի «Ելեկտրոնական
Մշակոյթը» Գիրքը** 18

**Տոթթ. Գորճ Սիմոնեանի Ուսումնական
Տուեալները** 19

ԹԻՒ 33 Նոր Շրջան
Նկատներ 2004

Անդամական 20



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 13-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՆՇՈՒՄ ԳԱՅԻՐԵԻ ՄԷՋ ԵՒ ՈՂՋԵՐԹ ԶՅ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՕՐ ԴԵՍՊԱՆ ՏՈՔԹ. ՍԵՐԳԷՅ ՄԱՆԱՍԱՐԵԱՆԻ

Կիրակի, 19 Սեպտեմբերին Գահիրեի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ, Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 13-րդ տարեդարձին առթիւ, Ս. Պատարագի ընթացքին տեղի ունեցաւ գոհաբանական մաղթանք մայր հայրենիքի խաղաղութեան, անասանութեան եւ բարգաւաճման համար:

Պատարագեց Հոգեշնորհ Հայր Գաբրիէլ արեւոյ Սարգիսեան: Եգիպտահայ Թեմի Առաջնորդական Տեղապահ Հոգեշնորհ Հայր Աշոտ վրդ. Մաացականեան իր քարոզին մէջ անդրադառնալով Հայաստանի անկախութեան, հրաւիրեց ներկայ հաւատացեալները աղօթելու որ մեր հայրենիքին անկախութիւնը ամրապնդուի եւ մեր ժողովուրդը բարօրութեան մէջ ապրի եւ ստեղծագործէ:

Եկեղեցական հոգեպարար արարողութենէն ետք, ներկաները հրաւիրուեցան Առաջնորդարանի դահլիճը, ուր Հայաստանի անկախութեան անցնող 13 տարիներու ընթացքին ձեռք բերուած դրական նուաճումներուն մասին ելոյթ ունեցաւ նախ՝ Թեմական Ժողովի Ատենադպիր Տոքթ. Սուրեն Պայրամեան, ապա՝ ՀՀ դեսպանատան Խորհրդական Օր. Անահիտ Թովմասեան, որ իր ջերմ, անմիջական ու անկեղծ սրտի խօսքով կոչ ուղղեց միասնաբար շարունակել աշխատիլ, սատար հասնդիսանալու մեր հայրենիքի բարգաւաճման:

Երեքշաբթի, 21 Սեպտեմբերի երեկոյեան, Եգիպտոսի մէջ գործող ՀՀ դեսպանատան պարտեզը կը յորդէր հայ եւ օտար պաշտօնական դեմքերով, որոնք եկած էին Հայաստանի Անկախութեան 13-րդ տարեդարձը շնորհաւորելու:

ՀՀ Լիազօր եւ Արտակարգ դեսպան Տոքթ. Սերգէյ Մանասարեան եւ Տիկինը, Խորհրդական Օր. Անահիտ Թովմասեան եւ Բ. Զարտուղար Տիար Միեր Սկրտումեան եւ Տիկինը դեսպանատան մուտքին ընդունեցին հիւրերը:

Տարեդարձի հսկայ կարկանդակը պատրաստուած Հայաստանի դրօշակին գոյներով միասնաբար հատեցին Պր. Դեսպանը, Եգիպտահայ Թեմի Առաջնորդական Տեղապահը եւ Գահիրեի եւ Աղեքսանդրիոյ Թեմական եւ Զաղաքական Ժողովներու Ատենապետները:

Այդ օր ժողովուրդը եկած էր նաեւ ողջերթ մաղթելու ՀՀ դեսպանին, որ Եգիպտոսի մէջ աւելի



Գահիրեի Թեմական Ժողովի ատենապետ տիար Անդրանիկ Մետրոպեան յիշատակի նուէրը կը յանձնէ ՀՀ Դեսպան Տոքթ. Սերգէյ Մանասարեանի: Աջին՝ տիկին Իրինա Մանասարեան:

քան իր 5-ամեայ աշխատանքը աւարտած, պիտի մեկնէր այլ երկրի մէջ իր գործունեութիւնը շարունակելու:

Այս առթիւ Գահիրեի Ազգային Իշխանութիւնը 25 Սեպտեմբերի երեկոյեան ողջերթի ճաշկերոյթ մը կազմակերպած էր, որու ընթացքին խօսք առաւ Եգիպտահայ Թեմի Առաջնորդական Տեղապահ Հոգեշնորհ Հայր Աշոտ վրդ. Մաացականեան: Պր. Դեսպանին անձին ու Եգիպտոսի մէջ ունեցած գործունեութեան անդրադարձաւ Զաղաքական Ժողովի ատենապետ Տիար Պերճ Թերզեան եւ ողջերթի խօսք առաւ Աղեքս. Զաղաքական Ժողովի անդամ Տիար Պերճ Հալաճեան:

Գահիրեի եւ Աղեքսանդրիոյ Ազգային Իշխանութիւններուն այս առթիւ պատրաստած յիշատակի նուէրները Պր. Դեսպանին յանձնեցին երկու Թեմականներու ատենապետներ՝ տիար Անդրանիկ Մետրոպեան եւ տիար Լեւոն Գաղթացեան:

Ընդունելութեան աւարտին հրաժեշտի յուզումնախառն ելոյթ մը ունեցաւ ՀՀ Արտակարգ եւ Լիազօր դեսպան Տոքթ. Սերգէյ Մանասարեան:

Մաղթենք որ յաւիտեան խաղաղ ու անկախ մնայ մեր հայրենիքը եւ թող մեր պետական այրերը առաջնորդուած Լուսավորչի կանթեղով, իմաստութեամբ ու խիղճով կառավարեն մեր երկիրը:

«Տ.»



ՀԲԸՄ-Ի 83-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՐ

Աելի քան 350 հիւրեր 25 երկիրներէ մասնակցեցան ՀԲԸՄ-ի 83-րդ Ընդհանուր ժողովին եւ Համաշխարհային Համագումարին:

ՀԲԸՄ-ի Նիւ Եորքի եւ Երեւանի գրասենեակներուն կողմէ միասնաբար կազմակերպուած այս միջոցառումը յատուկ նշանակութիւն ուներ, քանի որ ան տեղի կ'ունենար Հայաստանի մէջ ՀԲԸՄ-ի 100- ամեակի նախօրեակին:

Մէկ շաբաթ տևող համագումարը բացառիկ առիթներ ընծայեց անդամներուն, որ անոնք մօտէն ծանօթանան ՀԲԸՄ-ի բազմաթիւ ծրագիրներուն, որոնք կ'իրագործուին Հայաստանի եւ Ղարաբաղի մէջ, ներառեալ Հայորդաց Տունները, Ապուրի Խոհանոցները, Գերծայնային Կեդրոնը, Հայաստանի Ամերիկեան Համալսարանը, Ղարաբաղի մէջ գտնուող, վերաբնակեցուած Նորաշէն Գիւղը եւ Սբ. Էջմիածնի հետ կապուած բազմաթիւ ձեռնարկներ:

Համաժողովին բացման նիստը տեղի ունեցաւ Շաբաթ, 2 Հոկտեմբեր 2004-ին, Երեւանի կեդրոնը գտնուող Արմենիա Մարիոթ պանդոկին մէջ, որուն ներկայ եղան դեսպաններ, պետական պաշտօնեաներ, հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ պատուիրակներ: Ունկնդրուեցան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Ռոպերթ Զոհարեանի եւ ԼՂՀ-ի Նախագահ Արքատի Ղուկասեանի այս առթիւ յղուած յատուկ պատգամները: Պատուոյ հիւրերուն կարգին ներկայ էին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀՀ-ի Արտաքին Գործոց Նախարար Վարդան Օսկանեանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ապա՝ Նախարար Օսկանեան բարի գալուստ մաղթեցին մաս-

նակիցներուն եւ դրուատեցին ՀԲԸՄ-ի աշխատանքը հայրենիքի մէջ: Անոնք գնահատեցին կազմակերպութեան նուիրումը հայութեան, ուր որ ալ գտնուի ան: Նորին Սրբութիւնը Միութեան դերը նմանցուց կամուրջի մը, ինչպէս եկեղեցին, որ աշխարհի տարածքին տարտղնուած տարբեր համայնքները կը միացնէ:

Արտաքին Գործոց Նախարար Օսկանեանը նաեւ վեր առաւ հայրենիքի թէ Սփիւռքի մէջ, հայերու օգնութեան վերաբերեալ ՀԲԸՄ-ի ունեցած երկար պատմութիւնը, նշելով՝ թէ իրականութեան մէջ դարուս սկիզբէն մինչեւ Համաշխարհային Բ. Պատերազմ եւ անկէ անդին ու այսօր, ՀԲԸՄ-ը ամէն առիթով ցոյց տուաւ որեւէ տուեալ կացութեան յարմարելու եւ ճիշտ որոշումներ առնելու իր կարողութիւնը յօգուտ մեր ժողովուրդին:

Բացման իր նշումներուն մէջ ՀԲԸՄ-ի Նախագահ Պերճ Սեդրակեան քննարկեց այն լուրջ հարցերը զոր կը դիմակալեն Հայաստանը եւ Սփիւռքը, սկսելով երիտասարդ եւ ժողովրդավար երկրի մը ժողովուրդին պահանջներէն, մինչեւ ծանրակշիռ ժողովրդային տեղաշարժը Սիջին Արեւելքէն դէպի Արեւմուտք եւ Ռուսաստան, ինչպէս նաեւ Սփիւռքի փոփոխուող կարիքները 21-րդ դարուն եւ այն մարտահրաւերները, որոնք կը վերաբերին մեր հայկական ինքնութեան եւ ժառանգութեան պահպանումին: Նախագահ Սեդրակեան նշեց, թէ ՀԲԸՄ-ը միշտ պատրաստ է, ինչպէս իր ամբողջ պատմութեան ընթացքին, մատուցելու իր զօրավիգը եւ խաղալու կենսական դեր մը, դիմագրաւելու համար մեր ժողովուրդին առջեւ գտնուող մարտահրաւերները: Տիար Սեդրակեան անելցուց թէ «անկախ հայրենիքով, ազգային եկեղեցիով, եւ հարուստ պատմական ու մշակութա-



Համաժողովի բացման նիստին զխաւոր ամպիոնը ծախեն՝ տիար Սէմ Սիմոնեան, տիկ. Գարոյ Ասլանեան, տիարը Սարգիս Տէմիրճեան, Պերճ Սեդրակեան, Տոքթ. Արշաւիր Կեօնճեան, Տեարք Գառնիկ Եագուպեան, Լեւոն Զեպապեան եւ Պերճ Թերզեան:



Եգիպտոսի պատուիրակութիւնը ծախեն՝ տիկ. Արմինէ Տէյիրմէնճեան, տիար Օսնիկ Պլըքտանեան, տիկ. Արշօ Պլըքտանեան, տիար Պերճ Թերզեան, տիկ. Սեդա Թերզեան, Նախկին եգիպտահայ տիար Պետրոս Փիանտարեան, տիար Օսնիկ Կարիպեան, տիկ. Շողիկ Կարիպեան:



յին ժամանագութեամբ մենք պիտի գոյատեւենք եւ յաղթահարենք այն մարտահրաւերները զորս կը դիմագրաւենք»:

2002-ին Նիւ Եորքի մէջ կայացած 82-րդ Ընդհանուր Ժողովին յաջողութեան վրայ հիմնուած Երեւանի համաժողովը, ապահովեց որ այս լսարանը շարունակէ երկխօսութիւնը կազմակերպութեան Շրջանային Մասնաճիւղերուն միջեւ, ուր անոնք ներկայացուցին, վիճարկեցին եւ գնահատումի ենթարկեցին ԶԲԸՄ-ի ծրագիրները եւ ապագայի կարիքները:

83-րդ Ընդհ. Ժողովի նիստին ընթացքին, որ կայացաւ 4 Զոկտեմբերին, տիար Սեդրակեան շնորհակալութիւն յայտնեց այն ներդրումին համար զոր բերած են ներկաները: Առաւել էւս ան կէտք թէ ԶԲԸՄ-ը կը վերանայի իր ծրագիրները եւ ապագային կը դիմէ «նոր իրականութիւնները դիմագրաւելու համար հին ռազմավարութիւններ գործածելէ աւելի, գնահատում մը կատարել, թէ ի՞նչ բան կ'ընթանայ ու ի՞նչ բան չընթանար եւ կը ձգտի նոր ծրագիրներ մշակել, որոնք պիտի կարենան ներգրաւել եւ հետաքրքրել հայութեան յառաջիկայ սերունդները»:

ԶԲԸՄ-ի 83-րդ Ընդհանուր Ժողովին եւ Զամաշխարհային հաւաքին Եգիպտոսէն մասնակցեցաւ



ԶԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի ատենապետ տիար Օսնիկ Պլըքտանեան Ծիծեռնակաբերդի մէջ Եղեռնի Յուշարձանի ճամբեզրին ԶԲԸՄ-ի տնկած ծառը ջրելու պահուն:

պատուիրակութիւն մը որուն մաս կը կազմէին ԶԲԸՄ-ի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ տիար Պերճ Թերզեան եւ Տիկիկը, Նոյն Յանձնաժողովի փոխ ատենապետ տիար Օսնիկ Կարիպեան եւ Տիկիկը եւ Շրջանակային Յանձնաժողովի անդամ եւ ԶԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի ատենապետ տիար Օսնիկ Պլըքտանեան եւ Տիկիկը, ինչպէս նաեւ Գահիրէի ԶԲԸՄ-ի անդամուհի տիկին Արմինէ Տէյիբմէնճեան:

ԳՆԱՅԱՏԱՆՔ

ԶԲԸՄ-Ի ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱՊԵՏ ՏԻԱՐ ՊԵՐՃ ԹԵՐԶԵԱՆԻ



Երկուշաբթի 4 Զոկտեմբեր 2004-ի Կ. Վ. ժամը 5.00-ին, Երեւանի Մարիոթ Պանդոկի Սրահին մէջ տեղի ունեցաւ ԶԲԸՄ-ի Միութեան 83-րդ Ընդհանուր Ժողովը, որուն ընթացքին Միութեան Նախագահ տիար Պերճ Սեդրակեան կէտք ներկայ անդամներէն երեք հոգիի, տիար Զրաչ Մանուկեան (Կիպրոս), տիար Պերճ Թերզեան (Եգիպտոս) եւ տիար Զրանդ Պարտաքճեան (Գանատա) ԶԲԸՄ-ի մէջ ունեցած երկարամտայ գործունէութիւնը եւ այս առթիւ գնահատանքի նուեր մը յանձնեց վերոյիշեալներէն իւրաքանչիւրին:

Այստեղ կը փափաքենք նշել, թէ տիար Պերճ Թերզեան անցեալ Յուլիսին լրացուցած է ԶԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի անդամակցութեան իր 40-րդ տարին:

«Տեղեկատու»-ի խմբագրութիւնը կը շնորհաւորէ տիար Պերճ Թերզեանը եւ ուժ ու կորով կը մաղթէ իրեն շարունակելու համար իր միութենական եւ ազգային գործունէութիւնը:

«Տ.»

ԶԲԸՄ-ի նախագահ տիար Պերճ Սեդրակեան գնահատանքի նուերը կը յանձնէ ԶԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ տիար Պերճ Թերզեանի:



ՏԵՂԵԿԱՏՈՒՌԹԻՒՆ ԶԲԸՄ-Ի ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆԱԿԻ ԵՒ ԶԲԸՄ-Ի ԳԱՅԻՐԵԻ ՄԱՍՆԱԾԻՂԻՆ ՄԱՍԻՆ

Այս առթիւ ԶԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովը գանազան շրջանակներու ուղղուած իր շրջաբերական Նամակով, կը հրաւիրէր գանոնք ԶԲԸՄ-ի ՑՅ-րդ Ընդհանուր Ժողովին հակիրճ կերպով ներկայացնելու Շրջանակային Յանձնաժողովներու կամ Մասնաճիւղերու գոյավիճակը, օգտագործելով կանխաւ նշուած հորս հարցումներ որպէս ուղեցոյց, պայմանաւ որ ներկայացման տեւողութիւնը չանցնի 3-5 վայրկեանը:

Որպէս անդրադարձ այդ հրաւեր Նամակին, Համաժողովի Նիստերէն Մէկուն ընթացքին, ուր իւրաքանչիւր շրջանակ հակիրճօրէն տեղեկագրեց իր գործունէութեան մասին, Եգիպտոսի Շրջանակին անունով տիար Պերճ Թերզեան ներկայացուց հետեւեալը:

1- ԶԲԸՄ-Ի ԵԳԻՊՏՈՍԻ ԿԱՌՅՆՆԵՐԸ

ԶԲԸՄ-ը Եգիպտոսի մէջ ունի հինգ գործօն կառույցներ որոնք են ԶԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովը, ԶԲԸՄ-ի Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ տեղական Մասնաճիւղերը եւ Գահիրէի ու Աղեքսանդրիոյ զոյգ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐ մարզարանները:

ա- ԶԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովը կը նշանակուի ԶԲԸՄ-ի Կեդրոնական վարչական ժողովէն:

Սոյն Յանձնաժողովը, վերին մարմինն է եւ կապի գլխաւոր օղակը՝ Եգիպտոսի մէջ գործող ԶԲԸՄ-ի տեղական մարմիններուն եւ ԶԲԸՄ-ի Կեդրոնին միջեւ:

Յանձնաժողովը, նոյնպէս ԶԲԸՄ-ի Կեդրոնի հաշւոյն կը յանձանձէ Եգիպտոսի մէջ անոր պատկանող կալուածները եւ հնչուն դրամը:

բ- ԶԲԸՄ-ի Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ տեղական մասնաճիւղերը:

Այս զոյգ մասնաճիւղերը Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մէջ յառաջ կը տանին ԶԲԸՄ-ի մշակութային եւ բարեսիրական գործունէութիւնը:

ԶԲԸՄ-ի Գահիրէի մասնաճիւղը հիմնուած է 1911-ին: Իսկ, Աղեքսանդրիոյ մասնաճիւղը 1907-ին: Աղեքսանդրիոյ մասնաճիւղը այսպիսով կը հանդիսանայ ԶԲԸՄ-ի անդրանիկ մասնաճիւղը համաշխարհային չափանիշով:

Ներկայիս Գահիրէի ԶԲԸՄ-ի անդամներուն թիւն է 218, իսկ, Աղեքսանդրիոյ անդամներուն



Տիար Պերճ Թերզեան ելոյթի պահուն:

թիւը 164:

ԶԲԸՄ-ի այս երկու մասնաճիւղերն ալ ենթակայ են Եգիպտոսի Ընկերային Գործոց Նախարարութեան հսկողութեան:

գ- Գահիրէի (Յելիոպոլիս) եւ Աղեքսանդրիոյ զոյգ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐ մարզարանները:

ԶԲԸՄ-ի Եգիպտոսի մարզական եւ երիտասարդական գործունէութիւնը յառաջ կը տարուի Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ զոյգ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐ մարզարաններուն միջոցաւ:

Ներկայիս Գահիրէի ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ անդամներուն թիւն է 300: Իսկ, Աղեքսանդրիոյ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ անդամակցութեան թիւը 143:

Այս երկու միութիւնները ենթակայ են Եգիպտոսի Երիտասարդական եւ Մարզական Նախարարութեան հսկողութեան:

2- ԶԲԸՄ-Ի ԱՄԵՆՕՐԵԱՅ ԿԱՍ ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

ԶԲԸՄ-ը Եգիպտոսի մէջ ամենօրեայ կամ շաբաթօրեայ վարժարաններ չունի:

Գոյութիւն ունի Յելիոպոլսոյ (Գահիրէի արուարձան) Նուպարեան Ազգային Վարժարանը, որ Միութեանս հիմնադիր Պօղոս Նուպար Փաշայի կողմէ նուիրուած է ազգին:

Անոր կողքին Եգիպտահայ գաղութին մէջ կը գործեն երկու ազգային վարժարաններ եւս մին՝ Գահիրէի Գալուստեան Ազգային Վարժարանը



եւ միւսը Աղեքսանդրիոյ Պողոսեան Ազգային Վարժարանը: Վերոյիշեալ երեք վարժարաններու աշակերտութեան համագումար թիւն է 250:

Ասոնցմէ գատ, գոյութիւն ունի Անարատ Յղութեան հայ կաթողիկէ քոյրերու վարժարան մը, որ սակայն հայ աշակերտութիւն չունի եւ ուր հայերէն չդասաւանդուիր:

3- ԳԱՅԻՐԵԻ ՄԱՍՆԱԾԻՂԻՆ ԶԵՆԱՐԿԱԾ ՓԼԽԱՌՈՐ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ ԿԱՄ ԶԵՆԱՐԿՆԵՐԸ:

Այստեղ կը ծանրանանք գլխաւորաբար ՅԲԸՄ-ի Գահիրէի մասնաճիւղի ընկերային-բարեսիրական եւ մշակութային մարզերէն ներս գործադրած ծրագիրներուն վրայ, որոնք կեանքի կը կոչուին շնորհիւ 1996-ին իրագործուած Սաթենիկ Ճ. Չազըր Յիմնադրամին ընձեռած կարելիութիւններուն:

ա- ԸՆԿԵՐԱՅԻՆ-ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

1- Ապրուստի եւ դարմանումի օժանդակութիւն

Բաւարար նիւթական միջոցներ չունեցող եւ ընդհանրապէս տարեց ազգայիններու ապրուստի եւ դարմանումի համար կատարուած յատկացումներ, որմէ 2003-ի ընթացքին օգտուած են 58 հոգի (Ե. Ո. 210 620.00):

2- Կրթաթոշակներու յատկացում

Կրթական զանազան հանգրուաններու մէջ գտնուող ուսանողներու կատարուած յատկացումներ, որոնցմէ 2003-ի ընթացքին օգտուած են 47 հոգի (Ե. Ո. 213 670.00):

3- Առողջապահական հնամատարութիւն

Միջակ կամ միջակէն վար նիւթական միջոցներ ունեցող անհատներու դարմանումի ծախսերու մասնակցութիւն, փոխան տարեկան մասնակցութեան սակի մը:

Այս ծրագրին 2003-ի ընթացքին անդամակցած են 484 հոգի եւ օգտուած են 436 հոգի (Ե. Ո. շուրջ 438000.00):

բ- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

1- Մտաւորականներու կամ արուեստագետներու հովանաւորութիւն, անոնց կատարելով ուսումնասիրական պարապմունքի համար ժամկետով յատկացումներ:

2- Պատմական կարեւորութիւն ներկայացնող նիւթերու մանրածապաւենի վրայ փաստագրում:

3- Գիրքերու նուիրաբաշխում:

4- Հայրենի գիտական հիմնարկներու համար (Ակադեմիա եւ Մատենադարան) կարգ մը գիրքերու լոյս ընծայում:

5- Մեր մշակութային ժառանգութեան վրայ նորութիւն անելցնող հայերէն, արաբերէն եւ անգլերէն լեզուներով հատորներու լոյս ընծայում:

6- Կարելոր օժանդակութիւն Գահիրէի մէջ արաբերէն լեզուով լոյս տեսնող «Արեւ» ամսօրեայ յաւելումածի հրատարակութեան պիւնճեմ:

7- Հրատարակութիւն Միութեան Եգիպտոսի «Տեղեկատու» եռամսեայ պարբերականին:

8- Հայկական մշակութային ժառանգութիւնը հայուն եւ օտարին ծանօթացնելու համար, հայրենիքէն թէ սփիւռքէն մտաւորականներու, արուեստագետներու եւ տարբեր բնոյթի արուեստագիտական խումբերու ելոյթներու կազմակերպում:

9- Եգիպտական մամուլին մէջ 1878-էն 1923 շրջանին Հայաստանի եւ հայերու վերաբերեալ նիւթերու հաւաքում եւ փաստագրում:

10- Գերազանցիկ հայ աշակերտներուն տարեկան նիւթական մրցանակներու յատկացում:

11- Սեպտեմբեր 2004-էն սկսեալ պիտի գործադրուի «Հայ Ուսուցիչներու Փնտրատանքի Կենսաթոշակ»-ի ծրագիրը, որմէ պիտի օգտուին 25 տարիներէ անելի հայկական վարժարաններու մէջ ծառայած եւ հանգստեան կոչուած հայ ուսուցիչները:

Վերոյիշեալ ծրագիրները ընդհանրապէս բուլորն ալ յաջող ծրագիրներ են: Սակայն, անոնցմէ ընկերային-բարեսիրական ծրագիրներուն մէջ կը մասնաւորենք Առողջապահական հնամատարութեան Ծրագիրը: Իսկ, մշակութային ծրագիրներուն մէջ «Արեւ»-ի ամսօրեայ արաբերէն յաւելումածը, որ 7-րդ տարին ըլլալով մեծ դեր ունի, թէ՛ հայութիւնը եւ թէ՛ հայկական տեսակետները արաբական աշխարհի մտաւորականութեան ծանօթացնելու մէջ:

4- ԻՆՉ ԵՆ ԵՐԿՈՒ ԿԱՐԵՌՈՐԱԳՈՅՆ ՀԱՐՅԵՐԸ ՈՐՈՆՔ ԿԸ ԴԻՄԱԳՐԱՒԷ ՄԵՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ:

ա- Հայ նոր սերունդին ներգրաւումը ազգային կեանքէն ներս:

բ- Նոր սերունդին մօտ հայերէն լեզուի ընկալման զօրաւոր նահանջը:



**ՍԱԹԵՆԻԿ Ծ. ՉԱԳՐՐ ՖՈՆՏ
«ՀԱՅ ՈՒՄՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԳՆԱՅԱՏԱՆՔԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ»**

Գահիրեի ՀԲԸՄ-ի Սաթենիկ Ծ. Չագրր Ֆոնտը, հաճոյքը ունի յայտարարելու թէ Սեպտեմբեր 2004-էն սկսեալ եգիպտահայ երեք ազգային վարժարաններուն (Գալուստեան, Նուպարեան եւ Պօղոսեան) մէջ դասաւանդած հայ ուսուցիչներուն համար հաստատած է «ՀԱՅ ՈՒՄՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԳՆԱՅԱՏԱՆՔԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ» մը, տարեկան 3000 Ե. Ռ.-ի սահմանին մէջ, վճարելի 2 մասնավճարներով՝ առաջինը Մարտին, երկրորդը Սեպտեմբերին:

Սոյն ՀԱՅ ՈՒՄՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԳՆԱՅԱՏԱՆՔԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ստանալու իրաւունք ունին բոլոր հայ ուսուցիչները որոնք կը լրացնեն հետեւեալ պայմանները.

- 1- Եգիպտահայատակ են:
- 2- Հայ համայնքի գաւակ են:
- 3- Եգիպտոսի մէջ մշտական կեցութիւն ունին (սուազագոյնը տարեկան 6 ամիս):
- 4- Հպատակութիւնը անորոշ եղողները պարտին կեցութեան արտօնագիր ունենալ:
- 5- Հանգստեան կոչուելէ առաջ առնուազն 25 տարի (տարբեր շրջաններու կամ միակտուր), ամբողջական ժամանակացոյցով պաշտօնավարած են եգիպտահայ ազգային վարժարանի մը կամ վարժարաններու մէջ:
- 6- Հանգստեան կոչուելու տարիքը լրացուցած են:
- 7- ՀԱՅ ՈՒՄՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԳՆԱՅԱՏԱՆՔԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ստանալու իրաւունք չեն ունենար հանգստեան կոչուած այն անձերը որոնք մնայուն աշխատանք մը ունին կամ տարեկան 6000 Ե. Ռ. -է աւելի յատկացում կը ստանան այլ մարմինէ մը:

Ծանօթ. Սոյն յատկացումը ենթակայ է ամէն տարի վերատեսութեան ենթարկուելու, ըստ ՀԲԸՄ-ի Սաթենիկ Ծ. Չագրր Ֆոնտի տարեկան պիւտճէին, ինչպէս նաեւ ենթակայ է յաւելումի, նուազումի կամ բոլորովին դադարեցումի:

Պահանջուած փաստաթուղթեր.

- 1- Դիմումնագրի յատուկ յայտի լրացում եւ ստորագրութիւն:
- 2- Անձնական լուսանկար:
- 3- Անձնագրի պատճէն:
- 4- Հայ համայնքի պատկանելու փաստաթուղթ:
- 5- Վկայական այն վարժարանէն կամ վարժարաններէն ուր ամբողջական ժամանակացոյցով պաշտօնավարած է: Մնացեալ մանրամասնութիւններուն համար դիմել.

Գահիրեի ՀԲԸՄ-ի Գրասենեակը:
26 Մուրատ փողոց - Հելիոպոլիս
Հեռաձայն: 2916444 - 4151127 - 4152478
Հեռապատճէն: 2916916



«ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ ԿՈՒԶՈՒԻ»

Ալեքսանտր Սարուխան 1966 թուականին «Կազմենք Հայերենի Ուսուցիչի Ֆոնտը» խորագրով յօդուած մը կը ստորագրէր «Յուշարար»-ի ՀԲԸՄիութեան 60-ամեակին նուիրուած թիւին մէջ:

Մտահոգ, նախանձախնդիր, հեռատես եւ արուեստագետ երգիծանկարիչ մտաւորականը կ'ահագանգէր:

«Եթէ երէկ կար Ֆիշիթալիս Լիսեւ Թէ ՉԼիսեւ-ԼՈՒ հարցը, այսօր կայ Լիսեւ Թէ ՄԱԼՈՒ հրատապ հարցը: ԿԱՐՄԻՐ ՋԱՐԴԸ փոխակերպուեցաւ ՃԵՐ-ՄԱԿ ՋԱՐԴԻ, որ անտեսանելի ըլլալուն՝ շատ անելի վտանգաւոր է»:

Սարուխան շարունակելով մտքերը, կը գրէր թէ սփիւռքի տարածքին չկայ այլեւս հացի սովը, բայց կայ մտաւորականի սովը, զոր պատրաստելու համար էական պայման է ունենալ մեծ թիւով հայերէն լեզուին ու մշակոյթին հմուտ՝ գիտակից ուսուցիչներ:

Ապա, արծարծելով այս երեւոյթին տուն տուող պատճառները, կը նշէր թէ համայնքի մը պայմանները թոյլատու չեն կրնար ըլլալ հայ ուսուցիչին ապահովելու ապրելակերպի այնպիսի մակարդակ մը, որ խայծ հանդիսանայ նոր սերունդին, նուիրուելու այդ ասպարեզին: Ուստի ան կոչ կ'ուղղէր ՀԲԸՄիութեան փրկել սփիւռքահայութեան գոյատեւումը, արմատական եւ գործնական լուծումներով:

Համաձայն Սարուխանի, «Հրապուրիչ եւ քաշողական դարձնելով հայերենի ուսուցիչին պաշտօնը» կարելի է լուծել խնդիրը: Թէ ի՞նչպէս, ան կու տար լուծման երկու միջոց:

ա- Յատկացնել բացառիկ ամսաթոշակ մը, հաւասար իր ստացած սովորական գումարին:

բ- Ապահովել անոր ծեռութիւնը՝ բաւարար կենսաթոշակով:

Սարուխան կ'աւարտէր իր յօդուածը, թելադրելով որ սփիւռքի նոր բարերարները, իրենց կտակները յատկացնեն «Հայերենի Ուսուցիչի Ֆոնտ»-ին եւ աճապարեն:

1978-ի Դեկտեմբերին, սոյն յօդուածին արձագանքեց ազնիւ անձնաւորութիւն մը՝ յանձինքս այդ ժամանակաշրջանի Գահիրէի Հայ Աւետարանական համայնքի նախագահ՝ Տիար Աւետիս Չազըճեանի, այժմ ողբացեալ, որ 50.000 Ե. Ո.-ի նուիրատուութիւն մը կատարեց Գահիրէի Ազգային Իշխանութեան, որպէսզի իր ողբացեալ տիկնոջ անունով հաստատէ «Վերծին Չազըճեան Հիմնադրամ»-ը եւ անոր եկամուտները գործածէ եգիպտահայ վարժարաններուն մէջ հայագիտական նիւթեր դասաւանդող ուսուցիչներուն քաջալերական յատկացումներ կատարելու:

Այս առթիւ «Տեղեկատու»-ի Յուլիս 1980 - Ապրիլ 1981 թիւին մէջ, խմբագիր տիար Յակոբ Համբիկեան, անդրադարձնալով Սարուխանի յօդուածին,

կ'արտատպէր զայն ու կը դրուատէր Չազըճեանի այս ուղղութեամբ առած քայլը, ի միջի այլոց գրելով հետեւեալը:

«Այս դրական նախաքայլը խորապէս գնահատելի ըլլալով հանդերձ, կը սպասուի համազարդութեան տարողութեամբ նախաձեռնութեան մը, որ նիւթական առաւելութիւններ ստեղծելու կողքին, հաշուի առնէ նաեւ ազդու եւ որքան կարելի է ճշգրիտ չափանիշներու ստեղծումը, որպէսզի գնահատուին միայն այն ուսուցիչները որոնք արժանի են գնահատանքի, այլ խօսքով՝ կարողութիւնը ունին, հայ ոգին եւ հայ լեզուն իրենց աշակերտներուն փոխանցելու»:

Ան շեշտելով, թէ սփիւռքի հայկական վարժարաններուն առաքելութիւնը ուսեալ մարդ պատրաստելու առընթեր ՀԱՅ ՄԱՐԴ պատրաստելն է, իր կարգին կոչ կ'ընէր, որ «Սփիւռքի մէջ հայապահպանումի անունով գործող բոլոր կազմակերպութիւնները անխտիր, իրենց համար հարցերու հարցը նկատեն, հայ ուսուցիչին եւ մասնաւորապէս հայագիտական նիւթերու ուսուցիչի պատրաստութեան եւ գնահատումի պարագան»:

«Վերծին Չազըճեան Հիմնադրամը» արդէն մօտ 25 տարի է կը կատարէ իր քաջալերական յատկացումները, մասամբ իրականացնելով Սարուխանի թելադրած լուծման առաջին կէտը Եգիպտոսի մէջ:

Այս տարի ՀԲԸՄիութեան Գահիրէի Մասնաճիւղի «Սաթենիկ Ճ. Չազը Ֆոնտը»-ը կը հաստատէ «Հայ Ուսուցիչներու Գնահատանքի Կենսաթոշակ»-ը (տես յայտարարութիւնը), որուն ընձեռած կարելիութիւններով կ'իրականանայ Սարուխանի առաջարկին երկրորդ կէտը՝ դարձեալ Եգիպտոսի մէջ:

Անկասկած այս օրինակելի արարքները արժանի են մեծ գնահատանքի: Սակայն ուսուցիչի պաշտօնը նիւթապէս հրապուրիչ դարձնելը խնդիրն մէկ երեսն է: Գոյութիւն ունի նաեւ այլ երես մը, որուն լուծումը կախեալ է ոչ թէ միայն նիւթական միջոցներու ապահովումէն այլ անոր առընթեր, միջավայրին ուսուցչական ասպարեզին նկատմամբ ցուցաբերած յարգալից վերաբերմունքէն, տուներէն ներս թէ մշակութային եւ այլ կազմակերպութիւններու մէջ:

Ստեղծենք ոչ միայն նիւթականը, այլ նաեւ այն օրինակելի միջավայրը, ուր պիտի աճի այն պատանին, որ ազդուելով իր միջավայրէն ու անսալով իր ներքին ձայնին կամ կոչումին, հրապուրիչ ու քաշողական գտնէ հայերենի ուսուցիչին պաշտօնը:

Արդէն մօտ 40 տարի անցած է Սարուխանի հնչեցուցած ահագանգէն: Սակայն ամէն տարի Յուլիս, Յուլիս եւ Օգոստոս ամիսներուն մամուլով կը յայտարարուի «Հայերէն Լեզուի Ուսուցիչ Կ'ուզուի» ազդը: Հայերէն լեզուի ուսուցիչներ այլեւայլ պատճառներով կու գան ու կ'երթան, չգոհանալով ընձեռուած պայմաններէն կամ չգոհացնելով ակըն-



կալուած պահանջները:

Սփիւռքի տարածքին ապրող իրաւ եւ սրտցաւ հայ մտաւորականները ցարդ անկարող եղան ի մի գալով լուծելու այս խնդիրը:

Ինչպէս կը տեսնենք ոչ թէ աճապարանքով, այլ շատ դանդաղօրէն կատարուող որոշ շարժումներ կան այս առնչութեամբ հայրենիքին եւ սփիւռքի մէջ, որոնք ե՞րբ շօշափելի արդիւնքի կը հասնին, չենք կրնար նախատեսել:

Կ'ըսեն, թէ պետք է երազել եւ յամառօրէն ձգտիլ իրականացնելու այդ երազը:

Երազենք որ սփիւռքահայ իւրաքանչիւր ընտանիք խօսի մաքուր հայերէն, ձգտի հազարամեակներու քաղաքակրթութեամբ ու մշակոյթով հարուստ իր պատմութեան առթած հպարտութիւնը ներարկել իր զաւակներուն եւ մեր կրթական ու մշակութային օճախները ստեղծեն նախանձելի այն միջավայրը, ուր մեր նորածիլ սերունդները հասակ պիտի առնեն

ու դառնան հայկականութեամբ հպարտ մեր ապագայի ուսուցիչներն ու մտաւորականները:

Երազենք որ օր մը, անսալով մամուլին մէջ լոյս տեսած «Հայերէն Լեզուի Ուսուցիչ Կ'ուզուի» ազդին, պատասխանեն տասնեակ մը հայերէնի գիտակ որակաւոր մանկավարժ թեկնածուներ ու պատասխանատուները ընտրութիւն կատարելու դժուարութիւն ունենան:

Մի ծիծաղիք:

Չէ որ 600 տարի իր անկախութիւնը եւ հողերուն մեծ մասը կորսնցուցած մեր ժողովուրդը չկորսնցուց իր երազն ու յոյսը վերատիրանալու իր անկախութեան եւ ունեցաւ գայն:

Երազենք եւ յուսանք, որ տեսիլք, համոզում ու կարողութիւն ունեցող մտաւորականներ առաջնորդեն մեր ժողովուրդը:

Արաքսի Տօվլէթեան

ԳԵՐԱՊԱՅԾԱՌ Տ. ԳՐԻԳՈՐ ՕԳՈՍՏԻՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍԱՆ Կ'ԱՅՑԵԼԷ ԳԱՅԻՐԷԻ ԶԲԸՄ-Ի ԿԵԴՐՈՆԸ

Չորեքշաբթի 27 Յոկտեմբեր 2004-ի երեկոյեան Գահիրէի ԶԲԸՄ-ի Յելիոպոլսոյ մէջ գտնուող կեդրոնը այցելեց Գերապայծառ Տ. Գրիգոր Օգոստինոս Եպիսկոպոս Գուսան եւ հանդիպում ունեցաւ Գահիրէի ԶԲԸՄ-ի վարչութեան հետ:

Չերմ եւ հաճելի մթնոլորտի մը մէջ Գահիրէի ԶԲԸՄ-ի ատենապետ տիար Օննիկ Պլըքտանեան բարի գալուստ մաղթեց Գերապայծառին, ապա հակիրճ գիծերով ներկայացուց Միութեան գործունեութիւնը Եգիպտոսի մէջ: Նոյնպէս, խօսք առին տիար Մարտիկ Պալաեան, որ ներկայացուց Միութեան բարեսիրական եւ կրթական գործունեութիւնը եւ տիար Պերճ Թերզեան, որ ծանրացաւ մշակութային եւ հրատարակչական գործունեութեան վրայ:

Ապա, խօսք առաւ Գերապայծառ Գուսան Եպիսկոպոս նշելով թէ իր այցելութիւնը ունի երեք նպատակներ:

- Շնորհակալութիւն յայտնել ԶԲԸՄ-ի ներկայացուցիչներուն, որոնք մասնակցեցան իր գահակալութեան արարողութեան:

- Շնորհակալութիւն յայտնել ԶԲԸՄ-ի կողմէ հայ կաթողիկէ համայնքին զաւակներուն տրուած օժանդակութեան համար:

- Անձնապէս ծանօթանալ ԶԲԸՄ-ի պատասխանատուներուն եւ քննել փոխադարձ գործակցութեան կարելիութիւնները:

Հանդիպումը շարունակուեցաւ զանազան հարցերու եւ ապագայ գործակցութեան մասին կարծիքներու փոխանակումով:


Հանդիպումի աւարտին ԶԲԸՄ-ի վարչութեան անդամները Գերապայծառ Զօր հետ նկարուեցան, որմէ յետոյ հիւր Եպիսկոպոսը հրաժեշտ առաւ:



Գահիրէի ԶԲԸՄ-ի վարչութեան յիշատակի նկարը Գերապայծառ Տ. Գրիգոր Օգոստինոս Գուսանի հետ: Ձախէն նստած՝ Օր. Սոնա Մարգարեան, տիար Օննիկ Պլըքտանեան, Գերապայծառ Տ. Գրիգոր Օգոստինոս Գուսան, տիար Պերճ Թերզեան, տիկ. Թալին Երզնկացեան, ոտքի՝ տիար Նորայր Տօվլէթեան, Տոքթ. Ճորճ Միմոնեան, տեարք Զրիս Միքայէլեան, Օննիկ Կարիպեան, Միսաք Չէչճեան, Մարտիկ Պալաեան, Պերճ Թէչճեան, Կարէն Թէհիայեան եւ Տոքթ. Վիգէն Ճիգլճեան:



ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ 150-ԱՄԵԱԿԻ ՅՈՐԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ



Գալուստեան Ազգային Վարժարանի 150-ամեակի նուիրուած յուշամատենանի տրեսի սկարը:

*Եւ ի՞նչու պիտի չհպարտանանք
Կանք, պիտի լինենք, ու դեռ շատանանք:*

Պարոյր Սեակ

Գալուստեան Ազգային Վարժարանի բոլոր շրջանաւարտները եւ աշակերտները հպարտ են այսօր, որ իրենց սիրելի դպրոցը կը տօնէ իր հիմնադրութեան 150-ամեակը: Հպարտ են ոչ միայն Գալուստեանցիները՝ այլ նաեւ ամբողջ եգիպտահայութիւնը:

Սփիւռքահայութեան գոյատեւումը պահպանելը շատ դժուար է, եւ անկարելի է գայն իրականացնել, առանց ունենալու այն հիմնարկներ, ուր կարելի ըլլայ հայութիւնը, հայ լեզուն, հայոց պատմութիւնը, մշակոյթը, մատենագրութիւնը եւ անշուշտ կրօնքը պահպանել:

Այդ հիմնարկներէն են հայկական եկեղեցին, դպրոցները, ակումբները եւ թերթերը, որոնց միջոցով փոքրերն ու պատանիները առիթը կ'ունենան հայկական ջերմ մթնոլորտի մը մէջ սորվելու իրենց մայրենի լեզուն եւ ծանօթանալու իրենց մշակոյթին:

Գալուստեան Ազգային Վարժարանը իր գոյութեան 150 տարիներուն ընթացքին յաջողեցաւ ունենալ հայ շրջանաւարտներ, որոնցմէ

շատեր դարձան փայլուն գրողներ, բժիշկներ, արուեստագետներ, մասնակցեցան եգիպտահայ գաղութին պատմութիւնը կերտելու եւ ուր որ ալ գացին իրենց փայլուն մասնակցութիւնը բերին իրենց նոր գաղութներուն ազգային կեանքին:

Անշուշտ 150 տարուան պատմութիւն ունեցող հիմնարկը իրաւունք ունի ուրախութեամբ հանդիսադրելու իր յօբելէանը: Գահիրէի Ազգային Իշխանութեան հովանաւորութեամբ, Գալուստեան Ազգային Վարժարանի տնօրէն Տիար Սիմոն Չամբերթեանեան յօբելէական հանդիսութիւնը կազմակերպելու համար 14 հոգի յանձնախումբ մը կազմեց, որուն միացան Գալուստեանի շրջանաւարտներէն շատեր ու միասնաբար գործի սկսան:

Գործը բաժնուեցաւ մասերու, պէտք էր յայտագիրը պատրաստուեր, եւ գայն տպելէ վերջ դրկել աշխարհի մէջ տարածուած Գալուստեանի նախկին շրջանաւարտներուն: Այսօր տոյն հանդիսութեան մասնակցիլ փափաքողներուն ուղղարկել յայտագիրները եւ մասնակցութեան դիմումագիրները: Յանձնախումբը այս առիթով համացանցին վրայ կայք մը հաստատեց, որուն հասցէն է www.kalousdian.net ուր կարելի էր արձանագրուիլ եւ նոյնպէս յիշատակի գեղեցիկ նկարներ տեսնել:

Երբ յանձնախումբը ստուգեց թէ ունի տարբեր երկիրներէ (Ամերիկա, Գանատա, Աւստրալիա), 100-է աւելի մասնակցող, առաւել կարգ մը անձեր որոնք իրենց միջոցներով պիտի գային Եգիպտոս եւ մասնակցեին կարգ մը ձեռնարկներու, ան աւելի լուրջ գործի լծուեցաւ պատրաստելու հանդիսութեան մանրամասնութիւնները:

Գալուստեանի 150-ամեակին առիթով կարելոր էր հրատարակել յուշամատեն մը: Յուշամատենը պատրաստեց տիար Հարի Չէճէնեան, հիմնուելով Արտաշէս Գարտաշեանի «Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար» աշխատասիրութեան Հատոր Բ.-ին՝ Վենետիկ 1987 եւ Գալուստեան Ազգային Վարժարանի տոմարներէն քաղուած տուեալներու վրայ: Յուշամատենը սկսած է օրինութեան եւ շնորհաւորութեան գիրերով, յետոյ ներկայացուած են Աղա Կարապետ Գալուստի կեանքը, դպրոցին պատմութիւնը, Վարժարանին առընթեր գործող միութիւններուն անունները, տնօրէններու կենսագրականները, Գալուստեանի Ոսկեմատենանէ գրութիւններ, դպրոցին ալպովմէն պատկերներ, եւ վերջապէս՝ Գալուստեանի կրթական հունձըը տարիներու ընթացքին: Յուշամատենին առընթեր պատրաստուեցաւ խտասալիկ մը որ կը պարունակէ Գալուստեանի աշակերտներուն, շէնքերուն, տնօրէններուն եւ հանդիսութիւններուն պատկերները:



Գալուստեան Ազգային Վարժարանի 150-ամեակի յոբելեական հանդիսութիւնը սկսաւ Զինգշաբթի 2 Սեպտեմբերին եւ տեւեց 8 օր:

Սեպտեմբեր 1-ին օդակայան հասած մասնակիցները փոխադրուեցան հիւրանոց: Զամաձայն ծրագրուած յայտագրին, Զինգշաբթի 2 Սեպտեմբերին Գահիրէի ԶՅ Դեսպանատան պարտեզին մէջ, տեղի ունեցաւ բարի գալուստի ընդունելութիւնը, ուր յուզումնախառն ուրախութեամբ իրարու հանդիպեցան Եգիպտոս ապրող եւ արտագաղթած Գալուստեանցի շրջանաւարտներ, որոնցմէ շատեր երկար բաժանումէ ետք:

Բարի գալուստի խօսքերով ելոյթ ունեցաւ նախ Գալուստեանի տնօրէն՝ տիար Սիմոն Չամբերթէնեան, ապա՝ ԶՅ դեսպանին քաղաքէն բացակայութեան պատճառաւ, խորհրդական Օր. Անահիտ Թովմասեան պատշաճ ու ջերմ խօսքերով բարի գալուստ մաղթեց բոլորին մայր հայրենիքը խորհրդանշող ԶՅ դեսպանատուն: Պահը յուզիչ էր եւ ուրախ, երբ Գալուստեանի 150-ամեակին առթիւ պատրաստուած կարկանդակը հատուեցաւ Եգիպտահայ Թեմի Առաջնորդական Տեղապահ Զոգշ. Զայր Աշոտ Մաացականեանի, Գահիրէի Թեմական Ժողովի ատենապետ տիար Անդրանիկ Մետրոպեանի, Զաղաքական Ժողովի ատենապետ տիար Պերճ Թերզեանի, Գալուստեան Ազգ. Վարժարանի տնօրէն տիար Սիմոն Չամբերթէնեանի, ԳԱՎ-ի 150-ամեակի Յանձնախումբի ատենապետ տիար Պետրոս Մխտիկեանի կողմէ, որմէ ետք ժողովուրդը անցուց յիշատակելի օր մը:



Զոգշ. Տ. Աշոտ Վրդ. Մաացականեան, տեսրք Անդրանիկ Մետրոպեան, Սիմոն Չամբերթէնեան, Պետրոս Մխտիկեան եւ Պերճ Թերզեան Գ. Ա. Վ.-ի 150-ամեակի կարկանդակը կը հատեն:



Այցելութիւն եւ օրհնութիւն Աղա Կարապետ Գալուստեանի դամբարանին:



Զիր շրջանաւարտները Գալուստեանի բակին մէջ:



Այցելու հիւրերէն մաս մը Առաջնորդարանի դահլիճին մէջ:



Լաւ կազմակերպուած գբօսաշրջիկային յայտագիրը սկսաւ Ուրբաթ, 3 Սեպտեմբերին: Այդ օր հիւրերը այցելեցին Բուրգերը, Սֆինքսը, գորգերու գործարանը, պապիրոսի հիմնարկը եւ անուշահոտերու շուկան:

Շաբաթ, 4 Սեպտեմբերը երկար օր մըն էր մեր հիւրերուն համար: Անոնք առաւօտեան այցելեցին Աղա Կարապետ Գալուստի դամբարանը եւ ապա ուղղուեցան դէպի Գալուստեան Ազգային Վարժարան, ուր վեր-
յիշեցին իրենց մանկական օրերը, Նկարուեցան եւ ճաշեցին: Երեկոյեան տեղի ունեցաւ պարահանդէս մը Grand Hyatt պանդոկին «Farhady» սրահին մէջ, որուն ընթացքին ելոյթ ունեցան երգիչներ Նապիլ Ֆաթթալ եւ Մերի, ընկերակցութեամբ DJ Ռոպէր Թաշճեանի: Գալուստեանի նախկին շրջանաւարտ տիար Ժիրայր Բաբազեան առաջարկեց խօսք առնել եւ պատմեց Գալուստեանէն ներս իր ունեցած յիշատակներուն մասին, ապա՝ խանդավառութեամբ արտասանեց Եղիշէ Չարենցի «Ես Իմ Անոյշ Զայաստանի» ոտանաւորը, որոշ բառեր փոխելով գովերգելու Եգիպտոսը եւ Գալուստեանը եւ վերջացուց՝

«Յազար հոգի թէ քառասուն

Իմ Գալուստեան եարն եմ սիրում» տողերով:

Խանդավառուած այս մթնոլորտէն բոլոր ներկաները միասնաբար երգեցին «Մանկապարտեզ Գալուստեան»-ի մաղթերգը եւ երգով ու պարով զուարճացան մինչեւ առաւօտեան առաջին ժամերը:

Կիրակի, 5 Սեպտեմբերի առաւօտեան շրջանաւարտները Ս. Գրիգոր Լուսաւարիչ Եկեղեցի գացին, ներկայ եղան Ս. Պատարագին, որմէ ետք Առաջնորդարանի դահլիճին մէջ Զաղաքական Ժողովի ատենապետ Տիար Պերճ Թերզեան տեղեկութիւններ տուաւ Գալուստեանի պատմութեան մասին եւ պատասխանեց ներկաներուն հարցումներուն:

Le Pacha նաւուն վրայ կատարուած կեսօրուայ ճաշէն ետք, խումբը այցելեց Ս. Թերեզա Եկեղեցին եւ ակումբը, ապա՝ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ ակումբ ուր ճաշի սպասարկութենէն յետոյ, մեծ պաստառի վրայ ցուցադրուեցաւ Կիւմրիի «Գոհար» երգչախումբին գեղեցիկ ելոյթէն հատուածներ: Երկուշաբթի շատ կանուխ խումբը ճամբայ ելաւ դէպի Աղեքսանդրիա ուր այցելեց Ս. Պօղոս Պետրոս Եկեղեցին եւ Աղեքսանդրիոյ Ազգային թանգարանը, ապա Fish Market-ի մէջ ճաշելէ ետք՝ Աղեքսանդրիոյ գրադարանը եւ Մոնթազայի պալատը: Աղեքսանդրիոյ պտոյտը ւարտեցաւ Gardenia ճաշարանին մէջ տեղի ունեցած ընթրիքով:

Եգիպտոս գալ ու չայցելել հան էլ հալիլի շուկան, ուր ժամանակին մեծ թիւով հայ ոսկերիչներ ունէին իրենց փոքր աշխատավայրերը կամ վաճառատուները, կարելի չէր:

Խումբը երեքշաբթի օր այցելելէ ետք Հին Գահիրէի Միջնաբերդն ու Մուհամետ Ալիի մզկիթը, մինչեւ ճաշի ժամը յամեցաւ հան էլ հալիլիի նեղ շուկաներուն մէջ ցուցադրուած խայտաբղետ յուշանուէրներուն առջեւ: Երեկոյեան խումբին անդամները ներկայ եղան բուրգերու ստորոտին տեղի ունեցող «Ձայն եւ Լոյս» ներկայացումին, որմէ ետք ընթրեցին Mena House Oberoi հիւրանոցին մէջ:

Չորեքշաբթի օրը յատկացուած էր Հին Գահիրէի Եկեղեցիներուն ու մզկիթներուն այցելութեան: Գեր յագեցած պտոյտներէն, յոգնաբեկ Գալուստեանցիները, Նոյն օրը երեկոյեան Nile Pharoah նաւով շրջապտոյտ ընթրիք մը կատարեցին Նեղոսի հանդարտ ջուրերուն վրայ:


Հինգշաբթի, 9 Սեպտեմբեր:

Հասած էր ծրագրուած յայտագրին եզրափակիչ հանդիսութեան օրը: Յուսաբերի «Լ. Ս. Գարագաշեան» հանդիսարահին մէջ, ղեկավարութեամբ Սօ. Միհրան Ղազէլեանի եւ դաշնամուրի ընկերակցութեամբ Իրինա Աբգարեանի, Գալուստեանի աշակերտութիւնը երգով ու արտասանութեամբ ելոյթ ունեցաւ:



Գալուստեանի աշակերտները ելոյթի պահուն:

Հանդիսութեան ընթացքին խօսք առին տարբեր երկիրներէ եկած անձեր, շնորհաւորելու կարգադիր յանձնաժխումբը որ ճիգ չէր խնայած յաջողցնելու այս ձեռնարկը, եւ Նոյնիսկ մտածած էր մնայուն բժիշկ մը տրամադրել խումբին:



Գալուստեանի երկարամեայ ուսուցիչները յուշանուէրները ստանալու պահուն, Առաջնորդական Տեղապահ Հոգեշնորհ Տ. Աշոտ Վարդապետ Մնացականեանի, Թեմական Ժողովի ատենապետ տիար Անդրանիկ Մետրոպեանի եւ Զաղաքական Ժողովի ատենապետ տիար Պերճ Թերզեանի հետ:

Հանդիսութեան աւարտին Գալուստեանի տնօրէնութիւնը այս առթիւ պատրաստուած յուշանուէրներով պատուեց վարժարանին երկարամեայ դաստիարակները, որոնք 15 եւ ավելի տարիներ ծառայած էին եւ կը ծառայեն վարժարանէն ներս:



Գալուստեան Ազգ. Վարժարանի 150-ամեակին Նուիրած յայտագիրները վերջացած էին: Ներկայ հիւրերը ուշ երեկոյեան վերադարձան իրենց հիւրանոցը, առաւօտ կանուխ մեկնելու յայտագիրէն դուրս նոյնպէս Յանձնախումբին կողմէ կազմակերպուած պտոյտներուն ճարմ էլ Շէյխ, Լիւքսոր եւ Ատուան:

Կը շնորհաւորենք հանդիսութեան կարգադիր յանձնախումբը, Գալուստեանի տնօրէնութիւնը, ուսուցչական կազմը, հոգաբարձութիւնը, տիկնանց խնամակալութիւնը եւ մանաւանդ աշակերտութիւնը մաղթելով որ Գալուստեանը 150 ամեակ մը եւս շարունակէ կատարել իր առաքելութիւնը:

Որպէս Գալուստեանցի հպարտ եմ մեր դպրոցի 150-ամեայ պատմութեամբ: Շնորհակալութիւն մեր բարերարներուն, Գահիրէի իրերայաջորդ Ազգային Իշխանութիւններուն եւ մեր դաստիարակներուն:

Երախտապարտ ենք եւ շնորհակալ մեր ծննդավայր Եգիպտոսի պետութեան, որուն հովանիին տակ որպէս Եգիպտացի հայեր կ'ապրինք ու կը գոյատեւենք:

Կրկնելով Գոհար Գասպարեանի Գալուստեան Վարժարանի ոսկեմատեանին մէջ գրած խօսքերը՝ կ'ըսեմ, Իմ սիրելի դպրոցս,

Թող մեռնեմ փակուելով չլսեմ,
Թող ապրեմ ծաղկելով տեսնեմ:

Անի Պողոսեան



ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱԼՈՒՄՏԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

1853-ին Գահիրեի Տարպ Էլ Կինեսա փողոցին վրայ գտնուող ազգապատկան հողին վրայ, Կարապետ Աղա Գալուստեանի ծախքով, սկսած է կառուցուիլ Գահիրեի հորենեան Ազգային Վարժարանի երկյարկանի շէնքը, որուն պաշտօնական բացումը կատարուած է 15 Սեպտեմբեր 1854-ին, Եգիպտոսի Առաջնորդ Գաբրիել Եպս. Մարաշցիի, բարերար վանեցի Կարապետ Աղա Գալուստեանի եւ պաշտօնական հրահրեալներու ներկայութեամբ: Վարժարանը հորենեան կոչուած է Մովսէս հորենացիի անուամբ, ըստ Կարապետ Աղա Գալուստեանի փափաքին:

Կարապետ Աղա Գալուստեան իր կառուցած վարժարանին տնտեսական մատակարարութիւնը ապահովելու համար, 1858-ին կը կտակէ հողային հասութաբեր կալուածներ, որոնց տարեկան եկամուտներով կը հոգացուին Գահիրեի հորենեան, ապա՝ Գալուստեան Ազգային Վարժարանին ընդհանուր ծախսերը:

1897-ին հորենեան Վարժարանը կը կոչուի Գալուստեան, բարերար Կարապետ Աղայի յիշատակին, վայրը մնալով Տարպ Էլ Կինեսա:

1904-ի Փետրուարին Գալուստեան Վարժարանի հոգաբարձութիւնը ինդրագիր մը կը ներկայացնէ Գահիրեի Զաղաքական Ժողովին որուն մէջ կը գրէ, «Վարժարանին այլուր փոխադրութիւնը, այսինքն՝ սոր շէնքի մը կառուցումը անհրաժեշտ եւ անմիջական է»:

Գահիրեի Զաղաքական Ժողովը, կ'որոշէ մօտ 600 երկսեռ ուսանողներ ընդգրկող սոր դպրոց մը կառուցել Գահիրեի յարմարագոյն թաղերէն միոյն մէջ:

Այս նպատակին համար կը դիմուի Պօղոս Նուպար փաշայի, որ Պուլաք թաղամասինա մէջ գտնուող 3062 քմ. մ. տարածութեամբ իր հողը կը տրամադրէ դպրոցի շինութեան ու կը հոգայ շինարարութեան ծախսերը:

Գալուստեան Վարժարանի հիմնարկէքի արա-

րողութիւնը եւ անկիւնաքարի գետեղումը տեղի կ'ունենայ 4 Մարտ 1906-ին, իսկ վարժարանին բացման հանդէսը՝ 11 Յունիս 1907-ին:

1911-ին Նոյն հողամասին վրայ կը կառուցուի մանկապարտեզի երկյարկանի շէնքը, ուր կը փոխադրուին «Պէյն Էլ Սուրէյն» թաղին մէջ գտնուող Գալուստեան Մանկապարտեզի աշակերտութիւնը, որ հաստատուած էր 1897-ին:

1935-ին Շուպրա թաղի «Աթթար» փողոցին վրայ կը հիմնուի Գալուստեան Վարժարանի Շուպրայի մասնաճիւղը մանկապարտեզի չորս՝ եւ նախակրթարանի առաջին երկու դասարաններով:

1948 - 49 տարեշրջանին, նախ առաջին երկու դասարաններուն աշակերտութիւնը վերջնականապէս կը փոխադրուի Պուլաքի դպրոցը, ապա՝ 1964-1965 տարեշրջանէն ետք՝ մանկապարտեզը:

1935 - 77 հանգրուան առ հանգրուան, Գալուստեան Ազգ. Վարժարանը կը դառնայ երկրորդական վարժարան իր բոլոր բաժիններով:

1976-ին Գալուստեան Վարժարանի աւանդական վիթխարի շէնքերը կը փլցուին Եգիպտական կառավարութեան շինարարութեան նախարարութեան որոշումով: Տարածութիւնը պիտի գործածուէր Նոյն վայրին մէջ հսկայ կամուրջի մը շինութեան ծրագրին համար, որուն հետեւանքով Գալուստեան Վարժարանը իր 15 դասարաններով, տեսչարանով եւ ուսուցչարանով կ'ամփոփուի 1911-ին կառուցուած մանկապարտեզի երկյարկանի շէնքին մէջ, ուր «Գառզու» ցուցասրահը, գրադարանը եւ այլ դասարաններ երկուքի կամ երեքի բաժնելով կը գոյանան 16 դասարաններ:

1978 - 79 տարեշրջանէն սկսեալ Գալուստեան Վարժարանի շէնքն է 1911-ին կառուցուած երկյարկանի մանկապարտեզը ուր աշակերտութիւնը, ուսուցիչները եւ տեսչութիւնը գետեղուած են մինչեւ այսօր:




Կարապետ Աղա Գալուստեան



**ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՆԵՐ ԶՈԳՇ. Տ. ԳԱՐՐԻԷԼ ԱՐԵՂԱՅ
ՍԱՐԳԻՍԵԱՆ ԵՒ ԶՈԳՇ. Տ. ՏԱՃԱՏ ԱՐԵՂԱՅ ԾԱՏՈՒՐԵԱՆ ԳԱՅԻՐԵԻ ՄԷՋ**



Յոգշ. Տ. Գարրիել Արեղայ Սարգիսեան



Յոգշ. Տ. Տաճատ Արեղայ Ծատուրեան

Արդէն աւելի քան մէկ տարի է Մայր Աթոռ Ս. Էջմիածինի երիտասարդ միաբաններ Յոգշ. Տ. Գարրիել Արեղայ Սարգիսեան եւ Յոգշ. Տ. Տաճատ Արեղայ Ծատուրեան կը գտնուին Գահիրէի մէջ:

Յոգեշնորի հայրերը 2003 թուականի Սեպտեմբերի 8-ին, Ղպտի Եկեղեցւոյ Յոգեւոր Պետ Նորին Սրբութիւն Շնուտա Գ. Պատրիարքին հրաւերով եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսին օրհնութեամբ Գահիրէ ժամանեցին, Ղպտի Եկեղեցւոյ վանական կեանքին ծանօթանալու եւ արաբերէն լեզու սորվելու նպատակով:

Միաժամանակ անոնք իրենց ծառայութիւնը կը բերեն եգիպտահայ համայնքի հոգեւոր կեանքին, մասնակցելով ամենօրեայ ժամերգութիւններուն եւ Ս. Պատարագի արարողութեան:

Էջմիածինի Ոսկեհատ գիւղին մէջ 1976-ին ծնած Յոգեշնորի Տ. Գարրիել Արեղայ Սարգիսեանը 1994-1999 եղած է Սեւանի Վազգէնեան Յոգեւոր Ճեմարանի եւ 1999-2000 Էջմիածինի Գերոգեան Ճեմարանի սան:

2000 թուականին աշխատած է «Էջմիածին» ամսագրին խմբագրութեան մէջ, 2001-2002 ծառայած է Գեղարդի Վանքին՝ եւ մէկ եւ կէս տարի «Զարվաճառ»ի զօրամասին մէջ:

Յոգեշնորի Յայրը արեղայ օծուած է 2002-ի Սեպտեմբերի 1-ին ձեռամբ Արմաւիրի Առաջնորդ Գերաշնորի Տ. Սիոն Եպիսկոպոս Աղամեանի:

Յոգեշնորի Տ. Տաճատ Արեղայ Ծատուրեան ծնած է Յայաստանի Արմաւիր քաղաքը 1975 թուականին: Ան իր հոգեւոր կրթութիւնը ստացած է նախ երեք տարի Շիրակի Թեմի հոգեւոր ընծայարանին՝ ապա, վեց տարի, Էջմիածինի Գերոգեան Ճեմարանին մէջ:

Յոգեւոր Յայրը 2003 թուականի Փետրուարի 27-ին, Վարդանանցի տօնին արեղայ օծուած է, ձեռամբ Արցախի Թեմի Առաջնորդ Գերաշնորի Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեանի:

Այս տարի Էջմիածինի Յոգեւոր Գերոգեան Ճեմարանի հիմնադրութեան 130 ամեակն է:

Այս առթիւ խնդրեցինք Յոգշն. Տէր Տաճատ Ծատուրեանէն, որ Գերոգեան Ճեմարանին մասին տեղեկութիւններ փոխանցէ «Տեղեկատու»-ի ընթերցողներուն:

«Տ.»



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԳԵՈՐԳԵԱՆ ԶՈԳԵՒՈՐ ԾԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 130-ԱՄԵԱԿԸ

Այս տարի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում յատուկ հանդիսութեամբ տօնախմբուելու է Գեորգեան Զոգեւոր ճեմարանի հիմնադրման 130 ամեակը, որի հաստատման համառօտ պատմութիւնը ներկայացնում ենք ստորեւ:

Սկզբից եւեթ նշենք, որ ճեմարանի շինարարական աշխատանքներն սկսուել են դեռեւս Գեորգ Դ. Կոստանդնուպոլսեցի (1866-1882) Կաթողիկոսի անմիջական նախաձեռնութեամբ, 1869 թուականի Մայիսի 25-ին, յաւարտ որի հոգեւոր ուսումնական այս հաստատութիւնն առաջին անգամ իր դռներն է բացել ուսումնատենչ հայորդիների առջեւ, 1874 թուականի Սեպտեմբերի 28-ին: Սակայն Գեորգեան անունը ճեմարանն ստացել է յետագային՝ 1882-ից յետոյ միայն, երբ ճեմարանին է միացուել Էջմիածնի Ժառանգաւորաց դպրոցը:

Չարմանալի է, որ հակառակ Գեորգ Դ. Մեծագործ Զայրապետի գործադրած ջանքերին՝ իր օրօք ճեմարանի շրջանաւարտներից ոչ ոք այդպէս էլ կուսակրօն եկեղեցական չդարձաւ, ինչ յաջողուեց Մակար Ա. Թեղուտցի (1885-1891) Կաթողիկոսին, ում շնորհիւ Գեորգեան ճեմարանն ունեցաւ հզօր եւ հաստատուն դասախօսական կազմ, ուր ընդգրկուած էին այնպիսի անուններ, որպիսիք են՝ Մ. Արք. Օրմանեան, Ա. Նահապետեան, Ա. Մանդինեան, Փ. Վարդանեան, Ս. Պալասանեան, Մ. Պալեան եւ ուրիշներ: Յետագայում Սուրբ Էջմիածնի Զոգեւոր այս Կաճառում են դասաւանդել յայտնի գրողներ, երաժիշտներ, հայագետներ ու մեծանուն հայ գիտնականներ, այդ թուում՝ Մեսրոպ Արք. Տեր-Մովսիսեանը, Մ. Աբեղեանը, Զ. Աճառեանը, Լեոն, Զ. Կարա-Մուրզան, Կոմիտասը, Յ. Յովհաննիսեանը, Յ. Մանանդեանը եւ այլք:

Ժժ դարի վերջի եւ Ի դարի սկզբի Գեորգեան ճեմարան աւարտած եկեղեցական նշանաւոր դեմքերից անհրաժեշտ է նշել Ամենայն Զայոց Կաթողիկոս Գեորգ Զ. Զեօրեքչեանին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Ա. Յովսէփեանցին, Յուսիկ Արք. Չոհրապետանին, Ներսէս Արք. Մելիք-Թան-

գեանին, Տիրայր Արք. Տեր-Յովհաննիսեանին եւ այլոց, ովքեր հսկայածաւալ ներդրում ունեն Զայ Առաքելական Եկեղեցու պահպանման ու պայծառութեան գործընթացում: Մեծ է եղել նաեւ Գեորգեան Զոգեւոր Կրթօջախի դերը հայ մշակոյթի բազմազան ասպարեզներում ընդհանրապէս, բայց եւ գիտութեան, գրականութեան եւ երաժշտութեան բնագաւառներում՝ մասնաւորապէս, քանզի ճեմարանաւարտ բազմաթիւ մեծահամբաւ սաներ իրենց զգալի աւանդը բերեցին հայ մտքի զարգացման ու առաջխաղացման առաքելութեան մէջ, որոնցից արժանի են յիշատակման Ա. Ահարոնեանը, Ա. Բակունցը, Դ. Դեմիրճեանը, Լ. Շանթը, Ա. Չամիսեանը, Ս. Մալխասեանը, Կոմիտասը, Ա. Շահմուրադեանը, Ա. Միկոյանը, Ա. Մռաւեանը, Ս. Վրացեանը եւ ուրիշներ:

1917 թուականի Դեկտեմբերի 21-ին, ռազմաքաղաքական ոչ բարենպաստ պայմանների հետեւեանքով, Գեորգ Ե. Սուրենեանց Կաթողիկոսը հարկադրուած է լինում փակել ճեմարանը եւ այն յանձնել զինուորական հրամանատարութեանը, եւ ցաւօք սրտի, տարիներ յետոյ՝ 1919-1920 թուականներին, Գեորգեան ճեմարանի վերաբացման առնչութեամբ տեղի ունեցող բազում փորձեր ապարդիւն անցան: Միայն 1945 թուականի Նոյեմբերի 1-ին, ի գին մեծ ջանքերի եւ տքնութեանց, Գեորգ Զ. Զեօրեքչեան Կաթողիկոսին հնարաւոր եղաւ վերաբացել Էջմիածնի Զոգեւոր ճեմարանը՝ սակայն այլ մասնաշէնքում, ուր ժամանակին պահուում էր ճեմարանի իրենից բացառիկ արժէք ներկայացնող հարուստ գրադարանը՝ 45 հազար գրքերով, որ յետագայում տեղափոխուեց Երեւանի Ազգային գրադարան եւ Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարան: Էջմիածնի Զոգեւոր ճեմարանը մնաց հաւատարիմ Գեորգեան ճեմարանի ունեցած ոգուն եւ հիմք դրած հարազատ աւանդոյթներին՝ լինելով նրա իրաւայաջորդը:

Յուրախութիւն հայ ժողովրդի, 1995 թուականին՝ Զայաստանի անկախութիւնից շատ քիչ տարիներ անց, Գեորգեան ճեմարանի



Հենքը սեփականության իրաւունքով տրուեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, եւ օրուայ Ամենայն Յայոց Յայրապետ Գարեգին Ա. Կաթողիկոսը (1995-1999) 1996-ին ձեռնամուխ եղաւ ճեմարանի շինարարական աշխատանքներն անմիջապէս սկսուելուն, որի բարերարութիւնն ստանձնեց ամերիկահայ Գեորգ եւ Սիրվարդ Յովնանեան ամուլը՝ օժանդակութեամբ եւ հսկողութեամբ ԱՄՆ Յայոց Արեւելեան Թեմի ՅՕՖ-ի: 1997 թուականի Սեպտեմբերի 18-ին երկար տարիների լուծութիւնից յետոյ ճեմարանի դռները բացուեցին հայ ժողովրդի առջեւ: Արարողութեանը, որ տեղի ունեցաւ Գարեգին Ա. Երջանկայիշատակ Յայրապետի հանդիսապետութեամբ, իրենց մասնակցութիւնն էին բերում նաեւ Մայր Աթոռի եկեղեցականաց դասը, Յայաստանի հանրապետութեան նախկին նախագահ տիար Լեւոն Տէր-Պետրոսեանը, Յովնանեան գերդաստանը, ՀՀ Կառավարութեան անդամներ, բազմաթիւ հիւրեր արտերկրից ու Յայաստանից: Գարեգին Ա. Վեհափառ Յայրապետի օրհնութեամբ ճեմարանը վերստացաւ իր նախկին անունը եւ վերակոչուեց Գեորգեան Հոգեւոր ճեմարան: Սակայն, անցեալ տարի՝ 2003-ին, դարձեալ բարերարութեամբ Տէր եւ Տիկին Գեորգ եւ Սիրվարդ Յովնանեանների եւ օրհնութեամբ Ազգիս Յայրապետ Գարեգին Բ. Կաթողիկոսի, անհրաժեշտ եղաւ հիմնովին վերանորոգել ճեմարանի շէնքը, յաւարտ որի այս տարի՝ 2004 թուականի Օգոստոս 5-ին, կատարուեց վերանորոգուած շէնքի բացման հանդիսաւոր արարողութիւնը՝ նախագահութեամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Յայոց Յայրապետի եւ ի ներկայութեան Մայր Աթոռի հոգեւորականաց, ՀՀ Կառավարութեան անդամների, մշակոյթի եւ գիտութեան նուիրեալ մշակների եւ հայաստանաբնակ ու Սփիւռքից ժամանած բազում հայորդիների:

Գեորգեան Հոգեւոր ճեմարանը 2003 թուականին ՀՀ Կառավարութեան կողմից ճանաչուեց որպէս Աստուածաբանական Համալսարան, ուր այսօր դասաւանդուում են այնպիսի առարկաներ, ինչպիսիք են՝ Յայոց Պատմութիւն, Յայ հին միջնադարեան եւ նոր գրականութիւն, Յայոց Լեզու, Գրաբար, Ընդհանուր պատմութիւն, Ընդհանուր գրականութիւն, Ռուսերէն, Անգլերէն, Հին Յունարէն, Յայ Եկեղեցու պատմութիւն, Ընդհանուր Եկե-

ղեցու պատմութիւն, Դաւանաբանական Աստուածաբանութիւն, Բարոյական Աստուածաբանութիւն, Հոմոլական Աստուածաբանութիւն, Հին եւ Նոր Կտակարաններ, Վարքաբանութիւն, Յայ եկեղեցական մատենագրութիւն, Զարոգիսութիւն, Տրամաբանութիւն, Փիլիսոփայութիւն, Հոգեբանութիւն, Տեսական եւ Գործնական Ծիսագիտութիւն, Շարականագիտութիւն, Եկեղեցական երաժշտութիւն եւ այլն:

Այսօր շուրջ 150 ուսանող ունի Գեորգեան Հոգեւոր ճեմարան-Աստուածաբանական Համալսարանը, որի ուսումնառութեան շրջանը վեցամեայ է: Ամէն տարի ճեմարան են աւարտում 15-20 սաներ, որից յետոյ Ս. Էջմիածնի ճեմարանաւարտ ուսանողներին հնարաւորութիւն է ընձեռնուում ուսումը շարունակելու արտասահմանի բարձրագոյն տարբեր աստուածաբանական համալսարաններում:

Ինչպէս անցեալում, այսօր եւս ճեմարանում են դասախօսում Հանրապետութեան լաւագոյն դասախօս-ուսուցիչները, ովքեր պարբերաբար արժանանում են Վեհափառ Հօր տարեկան մասնաւոր գնահատանքներին եւ խրաբուսանքներին:

Այժմ ճեմարանին տեսուչն է Արժանապատիւ Տէր Եղիշէ Աւագ Զահանայ Սարգիսեանը:

Յաւելումն այս ամէնի ասեմք, որ ճեմարանում գործում են համակարգչային եւ երաժշտական սրահներ, որոնք նպատակաւորուած են ճեմարանցիներին համակարգչային գիտելիքներով ապահովելու եւ երաժշտական արուեստ ուսուցանելու համար: ճեմարանի հարեւանութեամբ է գտնուում ուսանողների համար 2000 թուականին կառուցուած նոր մասնաշէնքը:

Պատմութիւնն ինքն է վկայում փառապանծ եւ ոչ երբեք մոռացուած անցեալը 130 ամեայ Գեորգեան Հոգեւոր ճեմարանի, որ տարիների ընթացքում մշտապէս նախաձախնդիր դերակատարութիւն է ունեցել սեփական ժողովրդի կեանքում եւ այսօր էլ շարունակում է անշեղ ընթանալ՝ վառ պահելով իր երբեմնի հեղինակութիւնը ինչպէս հայ ժողովրդի, այնպէս էլ օտարների աչքում:



ՏԻԿԻՆԸ՝ ՈՐ ԳԻՐՔԷՆ ԱՏԵՂԾԵՑ ԶԱՅՐԵՆՏԻՔ ՄԸ

ՏՈՔԹ. ԱԱՄԻՐ ԱԱՐՅԱՆ

Տասնամեակ մը անցաւ «Մաքթապէր Էլ-Ուսրա»-ի հիմնադրութեան: Կը մտաբերեմ այն յիշատակելի օրը, երբ կարգ մը գրագէտներու, նախարարներու եւ մտաւորականներու հետ հաւաքուեցանք շուրջը այն սքանչելի Տիկնոջ, որուն աչքերը կը սեւեռնին դէպի երկինք, մինչ մտքին մէջ անդադար դարձող երազները կանգ չեն առնէր եւ միտքը մտածելէ չդադրիր:

Այդ երազներէն մէկն էր Մագիստրոսի աստիճանին համար պատրաստած իր թեզը կեանքի կոչել: Թեզին որուն մէջ ան կը պաշտպանէր նախակրթարաններու վիճակին բարելաւումը, կրթական եւ գիտական մակարդակի բարձրացումը եւ նոյնիսկ շէնքերուն եւ ծառայութիւններուն բարեկարգումը: Ան կը հաւատար, որ կրթական գործը ամենակարեւոր ազդակներէն մէկն է, որ կը գատորոշէ հայրենիքները եւ մանուկը որ կը ներկայացնէ առաջին հատիկը ապագայի կերտման, այսինքն հայրենիքին՝ ան է իսկական սկզբնաւորութիւնը կամ հիմը հայրենիքին:

Եւ մենք բոլորս, մուսնջ նստած այդ փոքր սեղանին շուրջ կը զարմանայինք ...

Ինչո՞ւ ցարդ ոչ ոք չէր մտածած մանկան մասին. նկատի չունիմ մանուկներուն առողջութիւնը միայն, կամ զանազան հիւանդութիւններով վարակումը եւ կամ անոր տնտեսական ու ընկերային մակարդակին մասին մտածելը: Ինչո՞ւ մեզմէ ոչ ոք չէր մտածած մանկան մասին որպէս մարդ, անոր խելքին, հոգիին եւ մանաւանդ կրելիք զանազան ազդեցութիւններուն մասին, որոնք ան ձեռք պիտի բերէր սորվելով յատկապէս, ազատ ընթացանութեամբ եւ ո՛չ դպրոցական գիրքերէն միայն:

Եգիպտացի մանուկը այդ ժամանակ սովոր էր բռնէլ դպրոցական գիրքը եւ իր ատելութեան ու զայրոյթի ամբողջ ուժը թափել անոր վրայ: Ան կը սորվէր մեքենականօրէն առանց հասկնալու կարողացածը, ապա՝ զայն կը պարպէր թուղթին վրայ, յաջողելու եւ անցնելու ուսումնական մէկ տարեշրջանէն միւսին եւ վերջաւորութեան, ընկալելալ սովորութեան համաձայն, դասագիրքը պատուհանէն դուրս նետելով, ծանր բեռն մը ազատելու համար:

Այս սքանչելի Տիկնոջ կարծես սահմանուած էր հոգալ Եգիպտոսի ապագային մասին, նուիրել իր կեանքը կերտելու ապագան եւ մտածելու մանկան մասին որպէս մարդ, միտք եւ հոգի ... Ան յայտնաբերեց, թէ այս բոլորը կարելի էր ձեռք բերել միայն ընթերցանութեամբ եւ արտադպրոցային ընթերցանութեամբ, ինչպէս նաեւ միայն, երբ գիրքը դրուելով մանուկին ձեռքին մէջ, այնքան պիտի գրաւէր զայն իր ձեռով ու բովանդակութեամբ, որ ան գիրքը հետը անկողին պիտի տանէր եւ քունին մէջ մտածելով կարողացած նիւթին մասին, թիփք պիտի տար իր երեսակայութեան եւ գիրքին ընդմէջէն պիտի ճամբորդէր վայրերու, մտքերու, զգացումներու եւ տեսիլքներու կախարդական աշխարհ մը:

Տիկնոջ խելացի աչքերը փայլեցան: Այս մտքին 21-րդ դարու եզրին կանգնող ու ինքզինք կառուցող հայրենքի մը համար ունեցած խորութիւնէն ու կարեւորութիւնէն:

Աղքատ եւ ողորմելի թաղերու մէջ հանրային գրադարաններու բացումէն չորս տարի անց, Եգիպտոսի Առաջին Տիկնոջ՝ Սիւզան Մուպարաք, դարձաւ 20-րդ դարու վերջաւորութեան եւ 21-րդ դարու սկիզբի կրթական ամենա-



կարեւոր ծրագիրը «Մաքթապէր Էլ-Ուսրա» (Ընտանիքին Գրադարանը) ստեղծողն ու հովանաւորողը:

«Ընտանիքին Գրադարանը» ստեղծելու միտքը որքան պարզ, նոյնքան խոր էր: Ան կը ձգտէր միլիոններ հաշուող եգիպտացի մանուկին հոգիին մէջ արմատաւորել ընթերցանութեան սերն ու սովորութիւնը, որ նախապէս իր առօրեայ կեանքին մաս չէր կազմէր:

Կ'ենթադրեմ որ այս նպատակը կատարելապէս յաջողեցաւ: Ոմանք ծաղրի կ'ենթարկէին եգիպտացի ժողովուրդը փորձելով դեռազնահատել անոր կարողութիւնը եւ նկարագրելով զայն որպէս ՖՈՒԼԻ ԵՒ ԹԱՄԱՄԻԱՅԻ ժողովուրդ:

Կ'ենթադրեմ նաեւ, որ այսօր «Ընտանիքին Գրադարանը» հիմնուելէն ետք, առանց վարանելու անոնք կ'ըսեն թէ մենք գիրքը, ընթերցանութեան, գի-

տելիքի եւ գիտութեան ժողովուրդ ենք:

Այս ամենէն վեր, «Ընտանիքին Գրադարանը» խոր ու վեհ նպատակը ունէր վերականգնելու այս ժողովուրդին անանդական յառաջապահ եւ առաջնորդող դիրքը արդի գրականութեան, մտածողութեան, գիտական եւ ստեղծագործական ոլորտներուն մէջ:

Այս կը վկայեն ոչ խօսքով, այլ գործնականօրէն արաբական աշխարհի մշակոյթին ու մտածողութեան մէջ անոր ունեցած առաջնորդող դիրքը, Մամլուքեան տիրապետութեան խաւարի դարէն, եգիպտական լուսաւորութեան դար անցած արաբական աշխարհը, որոնք այժմ կ'ապրին գիտութեան եւ յառաջդիմութեան դարը, կը կերտեն իրենց մշակութային ինքնոյնութիւնը եւ ներկայութիւնը աշխարհի վրայ:

Եւ ահաւասիկ 10-ամեայ հետեւողական ծանր ու դժուար աշխատանքէ ետք, «Ընտանիքին Գրադարանը»-ը հրատարակած է անելի քան 10 միլիոն գիրք, որոնք մուտք գործած են տուններէն ներս, դառնալով ոչ միայն եգիպտացի մանուկին, պատանիին եւ երիտասարդին մտածողական եւ ստեղծագործական գրահն ու հոգիին եւ մտքին հպարտութիւնը, այլ նաեւ ամբողջ արաբական աշխարհին:

Արդե՞ք պարզապէս նշանաւոր կնոջ մը երազն էր որ աչքերը երկինքին՝ կը որոնէր անկարելին, թէ պարզապէս սքանչելի երազ մըն էր, հսկայ իր տարողութեամբ եւ արժեքով, որն իրականացաւ:

Փառք այս սքանչելի տիկնոջ Սիւզան Մուպարաքի, անսահման սեր եւ յարգանք ապագան երազելու եւ նոր հայրենիքի մը համար նոր մարդ կերտելու իր կարողութեան:

«Ընտանիքին Գրադարանը»-էն լոյս տեսած իւրաքանչիւր գիրքին տեսի կողքին վրայ գտեղուած տիկնոջ՝ Սիւզան Մուպարաքի նկարը, իւրաքանչիւր եգիպտացիի կը յիշեցնէ, թէ իսկական հասունութիւնը նիւթականով չէ, ոչ ալ նիւթապաշտութեան վրայ յենելով, այլ հասունութիւնը «Գիտելիք»ն է, իմացութիւնը, առանց որուն չկայ հայրենիք. եւ եթէ անձը կորսնցուց իր հայրենիքը, կը կորսնցնէ իր անձը ... կը կորսնցնէ այն ամենը գոր գինք կեանքին կը կապէ:

Թարգմանեց՝
Արաքսի Տօվլիբեան



ՏՈՔԹ. ՃՈՐՃ ՍԻՄՈՆԵԱՆԻ «ԵԼԵԿՏՐՈՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ» ԳԻՐՔԸ


Տեսքով եւ ծաւալով համեստ հրատարակութիւն մը արդարեւ, սակայն ... Եգիպտոսի 70 միլիոն հաշուող բնակչութեան մեծ մասը տեղեակ է որ արդէն 10 տարի է Տիկին Սիւզան Մուպարաքի հովանաւորութեամբ տեղի կ'ունենայ «Ընթերցանութիւնը բոլորին համար փառատօն»ը: 10-ամեայ Մաքթապէթ Էլ - Ուսրան (Ընտանիքին Գրադարանը) իր 2004-ի գիտական հրատարակութիւններուն ծիրէն ներս այս տարի լոյս ընծայեց Տոքթ. Ճորճ Սիմոնեանի հեղինակած «Ելեկտրոնային Մշակոյթը» գրքոյկը: Հրատարակութեան ընդհանուր պատասխանատու Տոքթ. Սամիր Սարիան գրքոյկին առաջին չորս էջերուն վրայ ստորագրած է «Տիկինը որ գիրքէն ստեղծեց հայրենիք մը» յօդուածը, նուիրուած «Մաքթապէթ Էլ - Ուսրա» հրատարակչութեան 10-ամեակին եւ զայն մտայղացող եւ հովանաւորող Տիկնոջ՝ Սիւզան Մուպարաքի: (Յօդուածը թարգմանաբար ամբողջութեամբ կը ներկայացնենք մեր ընթերցողներուն, շեշտելու կարելորութիւնը այս հրատարակութեան):

Արժանանալ նման հրատարակութեան մը կը նշանակէ ունենալ միլիոններու հասնող ոչ միայն արաբ եւ արաբերէն գիտցող ընթերցողներ Եգիպտոսի մէջ այլ նաեւ ամբողջ արաբական աշխարհին մէջ:

Տոքթ. Ճորճ Սիմոնեանի հեղինակած առաջին գիրքը չէ այս: Ան հեղինակն է Մայիս 2000-ին «Թուային Տպագրութիւն» խորագրով արաբերէն լեզուով հրատարակուած առաջին գիրքին եւ 2002-ի Մարտին նոյնպէս առաջին անգամ արաբերէն լեզուով լոյս տեսած «Տպագրութեան Միջազգային Օրինաչափեր» գիրքին:

Արժանանալ նման հրատարակչութեան մը որ կը միտի գիտութեան լոյսով գինելու ժողովուրդին ապագայ սերունդները եւ արդի թուային էլեկտրոնական մշակոյթը հասանելի դարձնել, միլիոնաւորներու մէջէն ընտրութիւնը հայու մը հեղինակութեան, պատիւ է ոչ միայն հեղինակին, այլ նաեւ իր ծնողքին ու զինք ծնող ժողովուրդին:

Տոքթ. Ճորճ Սիմոնեանի «Ելեկտրոնային Մշակոյթը» գիրքը կազմուած է յօդուածներու շարքէ մը զոր «Էլ Ահրամ Էլ Տաուլի» շաբաթաթերթը մօտ մէկ ու կէս տարի հրատարակած է իր «Արաբական Մշակոյթ» էջին վրայ «Արաբները եւ Ելեկտրո-



նային Արեւմուտքը» խորագրով:

Գիրքը 15 x 20 սմ. ծաւալով 158 էջերու վրայ կը ներկայացնէ էլեկտրոնային արդի մշակոյթին առընչուող սիւթեր: Հիմնական հետեւեալ չորս բաժինները՝ Ելեկտրոնային Հրատարակութիւն, Ելեկտրոնային Կրթութիւն, Ելեկտրոնային Առեւտուր եւ Ելեկտրոնային Արաբական Ներկայութիւն, իրենց 20 ենթաբաժիններուն ընդմէջէն պարզ եւ հասկնալի ձեւով ընթերցողին կը ներկայացնեն այս մշակոյթին գործածութեան ոլորտները եւ արժէքը, 21-րդ դարու մեր ամենօրեայ կեանքին մէջ:

Տոքթ. Ճորճ Սիմոնեան իր գրած յառաջաբանին մէջ շեշտելէ ետք այն իրողութիւնը որ արդի էլեկտրոնային մշակոյթը դարձած է մեր առօրեայ կեանքին անբաժան մէկ մասը եւ որ անոր ազդեցութիւնը մեր՝ ու մեր հեռաւոր ապագային վրայ շատ մեծ պիտի ըլլայ, կոչ կ'ընէ որ մենք, մեր արաբական աշխարհին մէջ, առանց մտածելու եւ ուսումնասիրելու չտարուինք ամեն տեսակի հոսանքէ, որպէսզի չըլլանք միայն կապկողներ եւ պատճառ դառնանք մեր նիւթականը միտելու ոչ օգտակարը ունենալու համար: Մտածենք, ուսումնասիրենք եւ ընտրենք միայն այն որ յարմար է մեզի տուեալ ժամանակին եւ այն ձեւով, որ կը յարմարի մեզի, որպէսզի լաւագոյնս կարենանք օգտագործել այս ճարտարարուեստը, զարգացնելով եւ արտադրելով զայն տեղւոյն վրայ, մեր կարիքներուն համաձայն:

Գրասեղանիս վրայ է 42 տարեկան Տոքթ. Ճորճ Սիմոնեանի 1969-2004 երկարող տարիներու կրթական եւ աշխատանքային կեանքը պատկերող կենսագրականը:

Ճորճին համեստութիւնը իր ունեցած բոլոր արժանիքներուն գագաթն է: Ան աշխոյժ ծառայասեր եւ գործօն երիտասարդ անդամն է գաղութիս գաւազան եկեղեցական, մշակութային եւ մարզական կառոյցներուն: Ան մաս կը կազմէ ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին, նոյն Միութեան Գահիրէի Մասնաճիւղի վարչութեան ինչպէս նաեւ Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչութեան:

Կը շնորհաւորենք Տոքթ. Ճորճը իր այս նորագոյն հեղինակութեան հրատարակութեան առթիւ կը մաղթենք որ գրիչը միշտ արգասաբեր ըլլայ:



ՏՈՔԹ. ՃՈՐՃ ՍԻՄՈՆԵԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐԸ

1999

Տոքթորական տպա լուստի անձ, թե՛ ունենալով աւանդական Օֆսէթ տպա լուստի, առանց ջորի տպա լուստի եւ Թուային տպա լուստի մեթոտներու բաղղատականը, անոնց որակային հակակշոտունը եւ յարմարութիւնը ե իստական շուկային:

Այս թե՛ղին ուտունասիրութիւնը միասնաբար հովանաորոտած է ԼՈՆՏՈՆ ՔՈՒԵՆ ՕՖ ՓՐԻՆՔԻՆԿ–ի եւ Հելուանի համալսարանին կողմէ, ե իստական կառավարութեան կողմէ տրոտած կրթաթոշակով մը:

Սոյն թե՛ղին ամփոփոտունը հրատարակուտած է միջզաղ ային շորս մասնա իտական հանղեսներու մէջ:

1998

Մա իտորոս Արուեստից թուային նկարահանման տպա լուստի թե՛քնիքներ թե՛ղով – Լոնտոն Քոլէճ Օֆ Փրինքինկ:

1997

Յետ համալսարանական Տիրլոմ տպա լուստի եւ հրատարակութեան մէջ – Լոնտոն Քոլէճ Օֆ Փրինքինկ (միամեայ ամբողջական ժամանակով դասընթացը):

1994

Մա իտորոս Գիտութեանց – Ուտունասիրութիւն տեղական արտաղորութեան (ե իստական) Օֆսէթ մեյաններու որակի հարցին: Հելուանի համալսարան, Գահիրէ:

1992

Օֆսէթ տպա լուստի Տիրլոմ – Լոնտոն Քոլէճ Օֆ Փրինքինկ (Միամեայ ամբողջական դասընթացը) բաղղոիկ նահատականով, Ան լիա, որ ստացաժ է նոյն Քոլէճի 1992–ի «Տարուան ուսանողի» մրցանակը:

1987

Պսակաոր արուեստից – Տպա լուստի հրատարակութեան եւ ծրարումի բաժին, Հելուանի համալսարանի Կոնարական Արուեստներու ֆակոլտէտ, «շատ լաւ» յիշատակութեամբ:

1969–1981

Նախնական, պատրաստական եւ երկրորդական ուտում, Հելիոպոլսոյ Նուպարեան Աղ ային վարժարանին մէջ:

Հոս կ'ուզենք յիշատակել թէ Տոքթ. Ճորճ Սիմոնեան կը դասալսոտ բազմաթիւ մասնա իտական կրթական հիմնարկներու մէջ, կ'աշխատակցի բազմաթիւ կարետր եւ որակաոր տպա լուստի հանղեսներու:

Հեղինակն է Թուային տպա լուստի վերաբերեալ առաջին արաբերէն լեղոտով իրքին (2000).

Հեղինակն է տպա լուստի միջզաղ ային չափանիշներու առաջին արաբերէն լեղոտով իրքին (2002).

Անղամ է շարք մը պետական տպա լուստի հաստատութիւններու վարչական խորհուրդներուն, առանց հաշուելու մա իտորոսական եւ տոքթորական թե՛ղերու հսկիչ յանձնալիտումներու իր անղամակցութիւնը:

Իր մասնա իտական յորոտժները հրատարակուտած են աելի քան եօթը տարբեր պարբերականներու եւ թերթերու մէջ, որոնք լոյս կը տեսնեն Ե իստոսի, Ան լիոյ, Միացեալ Նահան աներու, Հարաւային Ափրիկէի, Իրանի եւ Հնղկաստանի մէջ:

Այս բոլորէն զատ ան մասնակցաժ է բազմաթիւ արաբական եւ միջզաղ ային համա ումարներու եւ անղամ է բազմաթիւ միջզաղ ային իտական հիմնարկներու եւ կազմակերպութիւններու:





ԱՆԴԱՄԱԿԱՆ

ԾՆՈՒՆԴ

ՀԲԸՄ-ի Գահիրեի անդամներին Տեր եւ Տիկին Ժոզեֆ եւ Մանուշակ Նիկողեաններ 9 Օ սստոս 2004-ին բախտաւորուած են առջինեկ աղջիկ զաւակով մը զոր անուանած են Անճէլա:

Նոյնպէս Տեր եւ Տիկին Ռաֆֆի եւ Մարինա Փարթամեան 16 Դեկտեմբեր 2003-ին բախտաւորուած են մանչ զաւակով մը, զոր անուանած են Ազատ:

Հոկտեմբերի 2-ին Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱԲԻ երիտասարդ մարզիկներին Տեր եւ Տիկին Կարօ եւ Ռիթա Թօսունեան եւս բախտաւորուած են առջինեկ մանչ զաւակով մը զոր անուանած են Արի:

Կը շնորհաւորենք բոլոր Նորածիններուն հարազատները մաղթելով որ անոնք հասակ առնեն սիրոյ եւ խաղաղութեան մէջ:

ՆՀԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ուրախութեամբ տեղեկացանք Գահիրեի ՀԲԸՄ-ի Մասնաճիւղի երիտասարդ օժանդակ անդամ Տիար Կարօ Վարժապետեանի ընդ Օր. Հանատի Ուալէլի նշանախօսութեան, որ տեղի ունեցած է 18 Սեպտեմբեր 2004-ին:

Կը շնորհաւորենք խօսեցեալ զոյգը, իրենց ծնողներն ու հարազատները, մաղթելով որ միշտ բարին լուսաւորէ իրենց կեանքը:

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Խոր ցաւ պատճառեց մեզի մահը բազմավաստակ դաշնակահար եւ մանկավարժ Նուարդ Տամատեանի, որ պատահեցաւ 19 Սեպտեմբերին:

Մեր խորագ ցաւակցութիւնները իր հարազատներուն, Տեր եւ Տիկին Երուանդ եւ Նորա Ազատեաններուն եւ Տեր եւ Տիկին Ժիրայր եւ Նորա Բարազեաններուն:

Թող հանգուցեալին յիշատակը միշտ վառ մնայ իր հարազատներուն եւ հարիւրաւոր աջակերտներուն սրտին ու յիշողութեան մէջ:

